



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

«24» դեկտեմբերի 2018 թ.

N 364-Ա

**ԼՈՒՍԻՆԵ ՍԻՄՈՆԻ ՌՈՍՏՈՄՅԱՆԻ ՀԵՏ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով

Կարգադրում եմ՝

1. 2018 թվականի դեկտեմբերի 24-ից, մինչև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար նշանակված մրցույթի օրը, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Գեղամասարի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել Լուսինե Սիմոնի Ռոստոմյանին՝ նրա հետ կնքելով ժամանակավոր աշխատանքային պայմանագիր:

2. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Անուշ Պողոսյանին:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



**Գ.ՍԱՆՈՍՅԱՆ
ք. Գավառ**